ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 56 - Ա
31 մարտի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 10-ի N 85-Ա որոշումը

որոշում եմ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ:
2. Հաստատել՝
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի կանոնադրությունը ՝ համաձայն N1 հավելվածի.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի անհատական կազմը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի առաջին նիստը գումարել 15-աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ